

ԿՏԱՎԱՏ

(Գեղարքունիքի մարզ)



Կտավատ

Կտավատ (լատ.՝ *Linum usitatissimum*), վուշ, կտավատագգիների (վուշագգիներ) ընտանիքի միամյա և բազմամյա խոտաբույսերի, հազվադեպ՝ կիսաթփերի ցեղ: Հայտնի է ավելի քան 230 տեսակ (այլ տվյալներով՝ 200):

Կտավատի սերմի ծննդավայրն է հին Հնդկաստանը, հենց այնտեղ են մոտ 9000 տարի առաջ արտադրվել առաջին գործվածքները: Մ.թ.ա. 4-5



հազար տարի այդ բույսը լավ հայտնի էր Միջագետքի, Ասորեստանի, Եգիպտոսի բնակիչների ն: Կտավատը համարում էին պտղաբերության, բերրիության և մայրության եգիպտական աստվածուհի Իսիդայի բույսը: Հին հույներին հայտնի էր կտավատի սերմի բուժիչ հատկությունները: Հիպոկրատը խորհուրդ էր տալիս օգտագործել լորձաթաղանթի բորբոքումների

համար: Իսկ Հին արևելյան բժշկության մեջ օգտագործվում էին կտավատի սերմերն ու յուղը՝ որպես լուծող, մաքրող ու փափկացնող հատկություններով օժտված դեղորայք: Ըստ Ավիցենայի

նկարագրությունների՝

կտավատի սերմն օգնում է ազատվել հազից, միզապարկի, երիկամների և աղիքների խոցերից, նաև՝ կտավատի սերմի ու բնական սոդայի ու թզի հետ միասին պատրաստված դեղաքսուքը լավ օգնում է պեպենների ու պզուկների դեմ:



Հայաստանում կտավատի վայրի տեսակներից են՝

Բարսեղյանի (հանդիպում է միայն Արարատի մարզի աղի ճահճուտներում), անատոլիական (Վայոց ձորի մարզում) և դեղնավուն (Վայոց ձորի և Սյունիքի մարզերում) կտավատները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:



🌸 **Linum austriacum L.** - L. perenne L. subsp. austriacum (L.) O. Bolos & Vigo, L. squamulosum Rudolphi

Կտավատ ավստրիական Лен австрийский

Նկարագրություն: Բաժակաթերթերը քիչ թե շատ թաղանթանման եզրերով են, առանց գեղձերի և թարթիչների: Ծաղկաբույլը բազմաձաղիկ է, ծաղիկները տաքասոնակ, պսակաթերթերը երկնագույն են, հակառակ ձվաձև կամ լայն



հակառակ ձվաձև: Ծաղիկները երկար ծաղկակոթերով են, սկզբում երկար, ծաղկումից հետո և հատկապես բերքի ժամանակ շատ երկար, մինչև 2-3սմ երկարությամբ, աղեղնաձև կորացած և խոնարհված: Բույսերը մերկ են, 15-16սմ բարձրությամբ: Բաժակաթերթերը սուր կամ կարճ սրվածքով են: Տուփիկը գնդաձև կամ գնդա-ձվաձև է: Ցողունը ճյուղավոր է:

Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ: Բազմամյա խոտաբույս է: Աճում է քարացրոններում, մարգագետիններում, չոր լանջերին, ծ.մ. 2800-3000մ բարձրությունների վրա:

Դեղատու բույս է: Հանդիսանում է մշակովի կտավատի վայրի ազգակիցը:

Տարածում: ՀՀ-ում՝ Շիրակի, Իջևանի, Սևանի, Երևանի, Դարեղեգեսի, Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններ:

Աշխարհում՝ Կովկաս, ՌԴ-ի եվրոպական մաս (հարավային շրջաններ), Ղրիմ, Միջին Եվրոպա, Միջերկրածովյան ավազանի երկրներ, Փոքր Ասիա, Իրան:

🌸 **Linum catharticum L.** Կտավատ լուծողական Лен слабительный



Նկարագրություն: Ծաղկակոթը պտղի ժամանակ չի երկարում: Բաժակաթերթերը ձվաձև են, եզրերում գեղձա-թարթիչավոր: Պսակաթերթերը երկարավուն հակառակ ձվաձև են, ազատ, սպիտակ, եղունգը դեղին: Տերևները հակադիր են



(վերինները երբեմն հերթադիր), եզրերը խորդուբորդ, միաջիղ: Ծաղկաբույլը եղանաձև է, երկար, ծաղիկները մանր, երկար ծաղկակոթերով: Բույսը մերկ է, 5-30սմ բարձրությամբ:

Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ: Միամյա կամ երկամյա խոտաբույս է: Աճում է խոնավ մարգագետիններում, գետերի և գետակների հովիտներում, անտառի բացատում, չոր լանջերին:

Տարածում: ՀՀ-ում՝ Իջևանի, Սևանի ֆլորիստիկական շրջաններ:

Աշխարհում՝ Կովկաս, համարյա ողջ Եվրոպա, հյուսիսային Աֆրիկա, Փոքր Ասիա, Իրան:

✚ **Linum hypericifolium Salisb.** Կտավատ սրոհունդատերև **Лен зверобоелистный**

Նկարագրություն: Բաժակաթերթերը մազմզոտ են, ձվաձև-նշտաբաձև, սուր, եզրերը խիտ գեղձավոր: Պսակաթերթերը լայն հակառակ-ձվաձև են, երկար ողնուցով, երկնագույն կամ բաց ծիրանագույն են: Տերևները սուր կամ սրավուն են, առանց կեռանման վերջավորության, երբեմն բթավուն, բացառությամբ ծաղկակից տերևների, եզրերը առանց գեղձերի են, երկկողմ՝ խիտ մազմզոտից մինչև լրիվ մերկ, երկարավուն նշտաբաձև կամ ձվաձև-նշտաբաձև են, ավելի քան հնգաջիղ: Ծաղկաբույլը հուրան կամ կեղծ հովանոց է, 5-20 ծաղիկյանի: Ծաղիկները խոշոր են, կարճ ծաղկակոթերով: Տուփիկը գնդաձև է, բաժակից 2 անգամ կարճ, քիչ թե շատ մազմզոտ: Բույսը 20-80սմ բարձրությամբ է:



Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ: Բազմամյա խոտաբույս է: Աճում է սուբալպյան գոտու խոնավ մարգագետիններում, քարացրոններում, անտառային կաճաններում, ծ.մ. 2200-3200մ բարձրությունների վրա:

Տարածում: ՀՀ-ում՝ Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններ:



🌸 **Linum nervosum** Waldst. & Kit. - *L. nervosum* subsp. *glabratum* (DC.) P.H. Davis



Կտավատ ջղավոր **Лен жилковатый**

Նկարագրություն:

երկարավուն-նշտարաձև
նշտարաձև են, քիչ թե շատ երկար և
նուրբ սրածայր, հիմքում համարյա
կլորավուն են, կոշտ, մերկ կամ խիտ

Տերևները

կամ



կարճ թավապատ, 3-5 ջղանի: Բաժակաթերթերը մերկ են, պսակաթերթերը ազատ են, լայն հակառակ ձվաձև, երկնագույն, դեղնավուն եղունգով: Ցողունները ուղիղ են կամ վեր բարձրացող, մերկ կամ տակից թավոտ: Ծաղկաբույլը նոսր վահանիկ է, քիչ թե շատ երկար ճյուղերով: Ծաղիկները կարճ կոթերով են: Բաժակաթերթերը փշանման վերջավորությամբ են, եզրերը գեղձավոր թարթիչավոր: Տուփիկը գնդաձև է: Բույսը 25-60սմ բարձրությամբ է:

Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ: Բազմամյա խոտաբույս է: Աճում է չոր քարքարոտ, կավապատ, կրապատ լանջերին, կաղնու նոսր անտառներում, սուբալպյան մարգագետիններում, ճանապարհի եզրերին: Ծաղկում և պտղաբերում է հունիս-հուլիսին:

Տարածում: ՀՀ-ում՝ Լոռու, Շիրակի, Ապարանի, Սևանի, Երևանի, Դարեղեգեսի, Զանգեզուրի, Մեղրու ֆլորիստիկական շրջաններ:

Աշխարհում՝ Կովկաս, Միջին Եվրոպա, Ղրիմ, ՌԴ-ի եվրոպական մաս (հարավային շրջաններ), Իրան:

🌸 **Linum tenuifolium** L. Կտավատ նրբատերև **Лен тонколистный**

Նկարագրություն:

գլխիկավոր: Տերևները
են, միաջիղ, ցողունի ստորին
կոպտավուն, եզրերը ծավլած



Ծաղիկները հոմեոստիլ են, սպին գծային կամ նեղ գծա-նշտարաձև մասում խիտ դասավորված, սուր, և խորդուրդորդ: Ցողունը մի քանի



հատ է, հիմքում փայտացող, ցրված-կարճաթավ: Ծաղկաբույլը բազմաձաղիկ է, նուր: Ծաղիկները կարճ ծաղկակոթերով են: Բաժակաթերթերը ձվա-նշտարաձև են, սուր, լավ

արտահայտված միջին ջղով, եզրերը՝ կարճացողուն գեղձիկներով: Տուփիկը ուղղականգուն է, ձվա-գնդաձև: Բույսը 15-50սմ բարձրությամբ է:

Կենսաբանական, Էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ: Բազմամյա խոտաբույս է: Աճում է չոր ճմակալած և քարքարոտ լանջերին:

Տարածում: ՀՀ-ում՝ Շիրակի, Իջևանի, Սևանի, Երևանի, Դարեղեգեսի, Զանգեզուրի, Մեղրու ֆլորիստիկական շրջաններ:

Աշխարհում՝ Կովկաս, ՌԴ-ի եվրոպական մաս (հարավային շրջաններ, Ղրիմ), Միջին և Ատլանտյան Եվրոպա, Միջերկրածովյան ավազանի երկրներ, Հյուսիսային Աֆրիկա, Միջին Ասիա, Իրան:

✚ **Linum usitatissimum L. Կտավատ սովորական** *Лен обыкновенный (долгунец)*



Նկարագրություն: Ցողունը 0.3-1.25մ բարձրության է, ուժեղ ճյուղավորված: Տերևները նշտարաձև են, սրածայր, մերկ, հերթադիր: Ծաղկի բաժակը բաղկացած է հինգ սրածայր բաժակաթերթերից, որոնք ծաղկումից հետո մնում են պտղին կից: Պսակը երկնագույն է: Պտուղը 5 բնանի կլորավուն տուփիկ է: Մերմը տափակ է, հարթ, փայլուն, ձվաձև, գորշ կամ շագանակագույն:

Կենսաբանական, Էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ: Միամյա խոտաբույս է: Չափազանց խոնավասեր է, չափավոր ջերմասեր, պահանջկոտ է հողի սննդատարրերի նկատմամբ: Երբեմն հանդիպում է այլ մշակաբույսերի ցանքերում, աղբոտ տեղերում, ճանապարհի եզրերին, բնակավայրերի մոտ:

Դեղատու և թելատու բույս է: Հնագույն մշակաբույս է:



Տարածումը: ՀՀ-ում՝ Սևանի, Երևանի ֆլորիստիկական շրջաններ:

Մշակվում է հիմնականում Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում:

Աշխարհում՝ մշակվում է Լեհաստան, Չեխիայի Հանրապետություն, Ռումինիա, Բուլղարիա, Նիդեռլանդներ, Հոլանդիա, Անգլիա, Կանադա, Ավստրալիա, ՌԴ-ի եվրոպական մաս:

Մշակովի կտավատ

Ինչպես արդեն վեր
(*Linum usitatissimum* L.)
կտավատագիների
Մշակության մեջ
տարատեսակային
յուղատու, միջանկյալ,



նշեցինք կտավատը
պատկանում է
(*Linacea*) ընտանիքին:
հայտնի են նրա չորս
խմբերը (թելատու,
փովոդ):

ԹԵԼԱՏՈՒ ԿՏԱՎԱՏ



կտավատի թելը բամբակի թելից ամուր է
երկու, իսկ բրդի թելից՝ երեք անգամ:
Ինչպես արդեն նշեցինք սերմիվ ստանում
են թանկարժեք յուղ (35-42%): Թափուկներն
օգտագործվում են թուղթ և այլ նյութեր
ստանալու համար:

Թելատու կտավատի թելը
մանածագործական լավագույն թելերից
մենկն է: Այդ թելերից պատրաստում են
քաթան, բրեզենտ, պարուսին,
սփռոցներ, սրբիչներ, ժանյակներ,
շարժիչ փոկեր, փողրակներ և
տեխնիկական գործվածքներ: Թելատու





Թելատու կտավատի համաշխարհային ցանքատարածությունը կազմում է 1,5 մլ. հեկտար, որից շուրջ մեկ միլիոն հեկտարը բաժին է ընկնում ԱՊՀ-ի երկրներին (Ռուսաստան, Բելոռուսիա, Ուկրաինա): Թելի միջին բերքը կազմում է 3,5-4,0 g/հա: Թելատու կտավատը մշակվում է նաև Հոլանդիայում, Բելգիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Չեխիայում,

Սլովակիայում, Անգլիայում և այլ եվրոպական երկրներում: Ոչ մեծ տարածությամբ թելատու կտավատը մշակվում է նաև ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Մերձբալթյան երկրներում:

ԿՏԱՎԱՏԻ ՏԱՐԱՏԵՍԱԿԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ


Հիմնական հատկանիշներ	Թելատու	Միջանկյալ	Յուղատու	Փովող
<i>Բույսի բարձրություն (սմ)</i>	70-125	50-70	30-50	50-60
<i>Ցողունի ճյուղավորվածությունը</i>	չի ճյուղավորվում	թույլ ճյուղավորվող	ուժեղ ճյուղավորվող	ուժեղ ճյուղավորվող
<i>Ցողունների քանակը մեկ բույսի վրա (հատ)</i>	1	1-2	4-5	1-6
<i>Տուփիկների քանակը մեկ բույսի վրա (հատ)</i>	9-22	15-26	30-50	30-40
<i>1000 սերմի կշիռը (գ)</i>	3,7-4,8	4,5-6,0	4,0-6,0	2,7-5,0
<i>Սերմերում յուղի տոկոսը (%)</i>	35-39	38-42	38-45	40-42
<i>Գարնանացան է, թե աշնանացան</i>	գարնանացան	գարնանացան	գարնանացան	կիսաաշնանացան



Բուսավրանական հատկությունները: Կտավատը պատկանում է կատվատազգիներին (Liniacea) ընտանիքին: Միամյա բույս է ($2n=30$): Արմատը առանցքային է, հողում քիչ խորասուզվող:

Տերևները նշտարածն են, սրածայր, մերկ, հերթադիր: Ծաղկի բաժակը բաղկացած է հինգ սրածայր բաժակաթերթիկներից, որոնք ծաղկումից հետո մնում են պտղին կից:

Պսակը բաղկացած է հինգ երկնագույն պսակաթերթիկներից, որոնք երբեմն լինում են սպիտակ, վարդագույն, մանուշակագույն:



Պտուղը կլորավուն տուփիկ է, վերին մասում սրածայր, ներսում բաժանված է հինգ բնի, որոնցից յուրաքանչյուրը իր հերթին կիսամիջնապատով բաժանված է երկու մասի: Ամեն մի մասում տեղավորված է մեկական սերմ: Ամբողջ պտղատուփիկը պարունակում է 10-ական սերմ:

Մերմը ունի 3-6 մմ երկարություն, տափակ է, հարթ, փայլուն, ձվաձև, ծայրում թեքված կտուցով: Գույնը գորշ կամ շականակագույն է:

Թելատու կտավատի մշակության հիմնական նպատակը ցողունից կեղևային թելոր ստանալն է: Կեղևային թելերը դասավորված են ցողունի կեղևի պարենքիմիային հյուսվածքներում՝ թելիկային խրճիկների ձևով: Թելիկային խրճիկները կազմված են տարրական թելիկներից: Տարրական թելիկը ձգված, ծայրը սրված, 15-40 մմ երկարությամբ բջիջ է, որի միջին հաստությունը հավասար է 20-30 միկրոնի: Այդ թելիկները պեկտինյան նյութերով պինդ սոսնձվում և կազմում են 35-40 տարեկան թելիկներից բաղկացած թելիկային խրճիկներ, որոնք օղակների ձևով (25-30 խրճիկ) տեղավորված



են ցողունի կեղևին մոտիկ և մեկը մյուսի հետ միանալով, կազմում են տեխնիկական թելի ժապավենը:

Թելիկային խրճիկների երկարությունը կախված է կտավատի ցողունի ընդհանուր բարձրությունից, ինչպես նաև տեխնիկական երկարությունից (շաքիլատերևների միացման տեղից մինչև ճյուղավորության սկիզբը):

Կտավատի բարձր ցողունները (70 սմ և ավելի) ունենալով մեծ տեխնիկական երկարություն, պարունակում են ավելի երկար տարրական թելիկներ և ավելի երկար տեխնիկական թելեր:



Բարակ ցողուններից (1-2 մմ) ստացվում է լավորակ թել, քանի որ դրանց տարրական թելիկները ունեն ավելի հաստ պատեր և համեմատաբար ոչ մեծ ներքին խոռոչ, որով պայմանավորված է դրա ամրությունը և ճկունությունը:

Թելը կազմում է կտավատի ցողունի ընդհանուր քաշի 20-30%-ը: Թելի որակական հատկանիշներն են՝ բարակությունը, ամրությունը, առաձգականությունը, երկարությունը և գույնը:



Թելի որակի ընդհանուր բնութագիրը նշանակվում է համարով, որը ցույց է տալիս մեկ միավոր քաշ ունեցող թելից ստացված մանվածքի երկարությունը: Կտավատի թելի համարը սահմանվում է զգայորոշման (օրգանոլեպտիկ) եղանակով, ըստ ստանդարտի: Բարձրորակ թելերի համարը կազմում է 25-36, միջակը՝ 12-15:



Որքան թելի համարը բարձր է, այնքան մեկ մետր գործվածքի համար քիչ թել է ծախսվում:

Կենսաբանական առանձնահատկությունները: Թելատու կտավատի սերմերը ծլում են 3-5 °C – ում: Մատղաշ ծիլերը դիմանում են մինչև -3,5-4 °C սառնամանիքներին:

Թելատու
համար
ջերմաստիճանը
եղանակները
ցողունի աճը: Այն
երբ ամպամած
լինում: Արևային
նպաստում է
ճյուղավորմանը,
իջնում է բերքը և



կտավատի աճման
ամենանպաստավոր
15-18 °C-ն է: Տաք
դանդաղեցնում են
ավելի լավ է աճում,
օրերի թիվը շատ է
ուժեղ լուսավորումը
ցողունի ուժեղ
որի հետևանքով
վատանում է որակը:

Թելատու կտավատը խոնավասեր բույս է, լավ է բերք տալիս բարեխառն խոնավ պայմաններում: Տրանսպիրացիոն գործակիցը 400-430 է: Ամռանից լավ աճում է, երբ հողի խոնավությունը կազմում է դաշտային սահմանային խոնավության 60-70%-ը: Հասունացման շրջանում տեղումները բացասական ազդեցություն են ունենում:

Կտավատն ունի աճման ու զարգացման հետևյալ փուլերը.

- Ծլման կամ շաքիլատերևային
- «եղնիկի» (երբ ցողունի բարձրությունը կազմում է 7-10 սմ)
- Կոկոնակալման
- Ծաղկման
- Հասունացման

Կտավատն արագ աճում է կոկոնակալումից առաջ (օրական 5-6 սմ):


Թելատու կտավատը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում է ծախսում պահանջված քանակությամբ սննդանյութերը: Ազոտի նկատմամբ բույսի պահանջի ճգնաժամային շրջանը «եղնիկի» փուլից մինչև կոկոնակալումն է, ֆոսֆորի



նկատմամբ՝ ծլումից մինչև 10-12 տերևների առաջացումը, կալիումի նկատմամբ՝ կյանքի առաջին երեք շաբաթում և կոկոնակալման շրջանում:

Թելատու կտավատը լավ է աճում, երբ հողի ռեակցիան թույլ թթվային է ($pH=5,9-6,5$): Ծանր, կապակցված կավային և տորֆային թթու հողերում այն վատ է աճում, կրային հողերում կտավատից ստացվում է կոպիտ և փխրուն թել: Կտավատին պետք է հատկացնել ավագակավային հողերը:

Մշակման տեխնոլոգիան: Թելատու կտավատը պահանջկոտ է նախորդների նկատմամբ: Երբ միևնույն դաշտում անընդհատ կտավատ է մշակվում, կամ այն հաճախակի է վերադառնում միևնույն դաշտը, ապա բույսերը խիստ տուժում են այսպես կոչված «կտավատահոգնածությանից», և բերքը կտրուկ կերպով իջնում է: Հողի կտավատահոգնածությունը տեղի է ունենում, երբ հողում առավել ուժեղ չափով զարգանում են վնասակար միկրոօրգանիզմները, հատկապես պարազիտային սնկերը:



Թելատու կտավատի համար ամենալավ նախորդը երեքնուկն է:

Հողի մշակությունը նույնն է ինչ մնացած գարնանացան մշակաբույսերինը: Կտավատի բերքի բարձրացման և թելի որակի լավացման նպատակով ազոտի, ֆոսֆորի և կալիումի հարաբերությունը ազոտով աղքատ հողերում պետք է կազմի 1:2:2, իսկ ազոտով հարուստ հողերում 1:3:3, նույնիսկ 1:3:4:

Ազոտական պարարտանյութերը հող պետք է մտցնել միայն նախացանքային կուլտիվացիայի ($3/4$ նորման) և սնուցման ժամանակ ($1/4$ նորման): Կալիումական պարարտանյութերն ամբողջությամբ հող պետք է մտցնել ցրտահերկի տակ: Ֆոսֆորական պարարտանյութերի մի մասը ($1/2$ նորման) հող պետք է մտցնել



ցրտահերկի տակ, մի մասը ($1/3$ նորման)՝ նախացանքային կուլտիվացիայի ժամանակ, իսկ մի մասն էլ ($1/4$ նորման)՝ հատիկավորված վիճակում ցանքի ժամանակ, սերմի հետ միասին: Կտավատի սնուցումը պետք է կատարել «եղնիկի» փուլում, երբ բույսերն ունենում են 6-10 սմ բարձրություն:

Ըստ պետական ստանդարտի, կտավատի սերմերը պետք է ունենան 97%-ից ոչ պակաս մաքրություն և 85%-ից ոչ պակաս ծլունակություն: Կտավատի համար առանձնապես վտանգավոր է, երբ ցանքերն աղտոտվում են գաղձով, սորուկով, որմով, տարածուկով, որի պատճառով էլ սերմերը պետք է զտել ու տեսակավորել կտավատագտիչ մեքենաներով:

Կտավատի ֆուզարիումի, անտրակնոզի, ժանգի դեմ պայքարելու համար սերմերը ախտահանում են ֆենտիուրամով (300 գ/գ), SUST-ով (300 գ/գ) և այլ



պատրաստուկներով:

Թելատու կտավատի ցանքի նորման կազմում է 25-30 մլն. ծլունակ սերմ, կամ 150-160 կգ/հա:

Ցանքը պետք է կատարել կտավատացան չարքացաններով, որոնք ունեն 7,5 սմ միջշարային տարածություն: Ցանում են 1,5-2,5 սմ խորությամբ:

Թելատու կտավատն ունի հասունացման 4 փուլ՝

- ✓ Կանաչ
- ✓ Վաղ դեղին
- ✓ Դեղին
- ✓ Լրիվ հասունացում



Հասունացման կանաչ փուլը սկսվում է ծաղկումից անմիջապես հետո: Այս փուլում ցողուններն ու տուփիկները դեռևս կանաչ են, դեղնում և չորանում են ցողունի ցածր մասի տերևները: Հասունացման կանաչ փուլում հավաքելու ժամանակ սերմ չի ստացվում, թելը լինում է նուրբ, բայց ոչ ամուր:



Հասունացման վաղ դեղին փուլում ցողունի ցածի մասի տերևները թափվում են, մնացածները՝ դեղնում, բայց բույսի գագաթը դեռ կանաչ է: Տուփիկների մեջ սերմերը բաց դեղին գույն են ունենում, ստացված թելի որակը բարձր է լինում:



Հասունացման դեղին փուլի ժամանակ բոլոր տերևները դեղնում են, բացառությամբ ցողունի գագաթնային մի քանի տերևների, մնացածները թափվում են: տուփիկները սկսում են գորշանալ, սերմերը դառնում են բաց շականակագույն: Թելի որակը որոշ չափով

իջնում է: Լրիվ հասունացման ժամանակ բոլոր տերևները թափվում են, ցողունները և տուփիկները՝ գորշանում, իսկ թելի որակը՝ վատանում:



Կտավատի բերքահավաքը պետք է կատարել հասունացման վաղ դեղին փուլում: Այդ



ժամանակ հավաքելիս, լրիվ հասունացման փուլի հետ համեմատությամբ, ստացվում են 30%-ով ավելի շատ երկար թելեր: Սերմնաբուծական տնտեսություններում թելատու կտավատի բերքահավաքը պետք է կատարել հասունացման դեղին փուլում:

Թելատու կտավատի բերքահավաքը բաղկացած է մի քանի աշխատանքներից: Բույսերը հանում են արմատներով, սերմերն անջատում, իսկ ցողուններն ենթարկում նախնական մշակման (թրջում, տրորում, գզում):

Բերքահավաքը կատարում են կտավատափետիչ մեքենաներով կամ կտավատահավաք կոմբայններով:

Առաջին խումբ մեքենաները փետում են ցողունները և խրձերով կամ առանց խրձերի փռում դաշտի երկարությամբ:

Կոմբայնները փետրելուց և խրձերը կապելուց բացի, սանրում և անջատում են նաև սերմատուփիկները:



Թելը ցողունից անջատելու նպատակով, հավաքած զանգվածը մի քանի շաբաթ թրջոց են դնում, ապա հատուկ մեքենաներով տրորում ու գզում:



ՅՈՒՂԱՏՈՒ ԿՏԱՎԱՏ

Յուղատու կտավատի հնագույն օջախներն են Հնդկաստանը, Չինաստանը, Եգիպտոսը, Արգենտինան, Փոքր Ասիան, Անդրկովկասը, Հաբեչստանը, Ալժիրը, Թունիսը և Իսպանիան:

Հայաստանում կտավատի մշակությունը հայտնի է եղել հնագույն ժամանակներից: Ըստ Ամիրդովլարի և Մխիթար Գոշի, կտավատը օգտագործվել է որպես յուղատու և դեղատու մշակաբույս: Ղ, Ալիշանը իր «Հայքուսակում» գրում է. «Անշուշտ մեր գաւառականաց ծանոթ են կտաւատի քանի մի տեսակք», մի ուրիշ տեղ գրում է.



«Կտաւատը տնտեսութեան մեջ ամենէն ծանոթ և պիտանի բուսոց մենկն է, ավելի հագուստի նիւթ տալու համար քան իւղոյն»: Այս և մի շարք այլ տվյալներ ապացուցում են, որ կտավատի ցանքերը մեծ տարածություններ են զբաղեցրել Հայաստանում, դեռևս հնագույն ժամանակներից սկսած: Յուղատու կտավատի մշակությունը լայն չափով շարունակվել է մինչև 20-րդ դարի երեսունական թվականները: Այդ մասին են վկայում լեռնային շրջանների յուրաքանչյուր գյուղում փլատակների վերածված բազմաթիվ ձեթահաները:





Ամբողջ աշխարհում մշակում են շուրջ 1,06 մլն. հա յուղատու կտավատ: Մեծ տարածություն է զբաղեցնում Արգենտինայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Հնդկաստանում. Ռուսաստանում, Ղազախստանում:

Հայաստանի լեռնային շրջանները յուղատու կտավատի աճեցման ու

զարգացման համար ունեն նպաստավոր պայմաններ: Բազմաթիվ օրինակներով ապացուցված է, որ լեռնային ու բարձր լեռնային շրջաններում յուղատու կտավատից ստացվում է 8-10, իսկ առանձին հողակտորներում՝ 14-16 գ/հա սերմի բերք: Դեռևս շատ հին ժամանակներից Աշոցքի, Ամասիայի, Արթիկի, Անիի, Սիսիանի, Ախուրյանի, Սևանի ավազանի և այլ շրջաններ համարվել են կտավատ մշակող շրջաններ:

Կտավատի յուղը օգտագործում են սննդի և բժշկության մեջ, օլիֆ, զանազան լաքեր, տպագրական, վիմագրական և այլ գեղարվեստական ներկեր, լինոլեում, մոմլաք, չթրջվող

հագուստներ

պատրաստելու

համար, ինչպես

նաև կաշվի և

կրկնակոշիկի

արտադրության

մեջ:

Կտավատի

քուսպը

պարունակում է

24% մարսելի

սպիտակուցներ,



նրա մեկ կգ-ը պարունակում է 1,2 կերային միավոր:

Կենսաբանական և մշակման առանձնահատկությունները: Յուղատու կտավատը ավելի ջերմասեր է, քան թելատուն: Յուղատու կտավատի նուրբ ծիլերը դիմանում են -4°C սառնամանիքին: Ծլումից միջև սերմերի հասունացումը պահանջում է ջերմություն՝ $1600-1800^{\circ}\text{C}$: Թելատուների հետ համեմատած ավելի քիչ պահանջկոտ է խոնավության նկատմամբ: Արմատային համակարգը համեմատաբար խորը թափանցելու շնորհիվ, յուղատուները կարողանում են օգտագործել հողի ենթաշերտի խոնավությունը, որի պատճառով էլ դիմանում են երաշտին:

Յուղատու կտավատի վեգետացիայի տևողությունը, թելատուների հետ համեմատած, մի քանի օրով երկար է: Սակայն յուղատու կտավատի ձևերի բազմազանությունը, որոնք տարբերվում են նաև վեգետացիայի տևողությամբ, հնարավորություն է տալիս այն մշակելու տարբեր կլիմայական պայմաններում:

Յուղատու կտավատները վեգետացիայի տևողությամբ բաժանվում են հինգ խմբի:

Գերվաղահաս, որոնց վեգետացիայի տևողությունը կազմում է 75 օր, վաղահաս՝ 76-82, միջահաս՝ 83-95 օր, միջուշահաս՝ 96-105 օր և ուշահաս՝ 150 օրից ավել:

Յուղատու կտավատի ծաղկումը բավականին երկար է տևում, որոշ ձևերի մոտ՝ 40-45 օր: Առանձին ծաղիկների ծաղկման տևողությունը 1-2 ժամից ավելի չէ: Ծաղկումը տեղի է ունենում առավոտյան ժամերին: Կտավատի սերմերը պարունակում են չհագեցված ճարպային թթուներով հարուստ մեծ քանակությամբ յուղ, որի յոդային թիվը բավականին բարձր է:



Հայտնի է, որ հյուսիսում կամ լեռնային շրջաններում մշակված յուղատու կտավատի յոդային թիվը լինում է բարձր, որի շնորհիվ այդ կտավատի յուղից ավելի լավ օլիֆ է ստացվում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արուսյանի շրջանի պայմաններում յուղատու կտավատի սերմերում յուղը կազմում է ավելի քան 40%, յոդային թիվը՝ 123: Գավառի շրջանում համապատասխանորեն 45,5% և 171,0:

Կտավատի սերմի հասունացմանը զուգընթաց ոչ միայն ավելանում է սերմի մեջ կուտակված յուղի քանակը, այլև մեծանում է նրա յոդային թիվը, հետևաբար լավանում են նրա տեխնիկական ցուցանիշները:



Յուղատու կտավատի սորտերն իրարից տարբերվում են բույսի բարձրությամբ, ծաղկի գույնով, տուփիկի մեծությամբ, սերմի գույնով, սերմի մեծությամբ, վեգետացիայի տևողությամբ, երաշտադիմացկունությամբ,

բերքատվությամբ և այլն:

Հայաստանում շրջանացված է յուղատու կտավատի Արթիկի 7 և Ղուկասյանի 17 սորտերը:

Յուղատու կտավատը բարձր բերք է տալիս սննդանյութերով հարուստ հողերում և նրա արմատային զանգվածի հիմնական մասը վարելաշերտի սահմաններից խորը չի թափանցում: Կտավատը սկզբնական շրջանում դանդաղ աճելու հետևանքով խիստ տուժում է մոլախոտերից: Այդ պատճառով էլ ոչ բոլոր մշակաբույսերը կարող են կտավատի համար լավ նախորտ լինել:

Յուղատու կտավատը միննույն տեղում շարունակ մշակելու կամ կարճ ժամանակից հետո նույն դաշտը վերադառնալու հետևանքով բերքատվությունը խիստ ընկնում է: Այդ պատճառով էլ յուղատու կտավատը նույն դաշտը պետք է վերադառնա 4-5 տարի հետո:



Յուղատու կտավատի լավագույն նախորդներն են բազմամյա բակլազգի խոտաբույսերի ճմուռը կամ շրջված ճմուռը, սև ցելից հետո մշակված աշնանացան ցորենը, ընդեղեն բույսերը, կարտոֆիլը և այլն:

Յուղատու կտավատն ինքը լավ նախորդ է աշնանացան ցորենի համար: Կան կարծիքներ այն մասին, որ խոնավությամբ ապահովված շրջաններում յուղատու կտավատը լավ ծածկոցային բույս է հանդիսանում բազմամյա խոտաբույսերի համար:

Յուղատու կտավատը պատականում է այն մշակաբույսերի շարքին, որոնք սննդանյութերը ծախսում են ամբողջ վեգետացիայի ընթացքում:

Յուղատու կտավատի սերմի բերքատվությունը առավել չափով բարձրանում է, երբ պարարտացվում է լրիվ հանքային պարարտանյութերով: Հայաստանի կտավատացած շրջաններում խորհուրդ է տրվում կտավատը պարարտացնել N60-90P75K75 նորմաներով: Ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը պետք է տալ ցրտահերկից (աշնանը կատարված հերկ՝ զարնանը ցանելու համար) առաջ, իսկ ազոտական պարարտանյութը՝ նախացանքային մշակության և սնուցման ժամանակ: Տեղական պարարտանյութերից լավ արդյունք է տալիս մոխիրը՝ հեկտարին 6-8 ց նորմայի հաշվով:

Հողի մշակությունը կատարվում է մյուս զարնանացան մշակաբույսերի նման:


Ցանքը պետք է կատարել վաղ զարնանացան հացահատիկների ցանքի հետ զուգընթաց, 3-4 սմ խորությամբ: Ցանքի վաղ ժամկետի պայմաններում ոչ



միայն բարձրանում է յուղատու կտավատի սերմի բերքատվությունը, այլև ավելանում է սերմերում կուտակված յուղի քանակը և լավանում է սերմի ցանքային որակը:




Յուղատու կտավատի ցանքի նորման կազմում է 5-6 մլն. ծլունական սերմ հեկտարին, կամ 50-60 կգ/հա: Ցանքը պետք է կատարել 15 սմ միջշարային տարածությամբ կտավատացան շարքացանով:



Յուղատու կտավատին մեծ վնաս է հասցնում կտավատի գաղձը (*Cuscuta epithymum* Weihe): Գաղձով վարակված կտավատի բույսերը շատ վատ են աճում, ժամանակից շուտ հասունանում և սերմի քիչ բերք են տալիս: Գաղձի դեմ պետք է պայքարել սերմերը մանրակրկիտ կերպով զտելու, դաշտում գաղձը երևալուն պես կտավատի բույսերի հետ միասին հեռացնելու և ճիշտ ցանքաշրջանառություններ կիրառելու միջոցով:

Ցանքերում օջախներով կարող է տարածվել կտավատի ֆուզարիալ թառամումը, որից կտավատի բույսերը մահանում են կամ շուտ գորշանում, սերմերն էլ խիստ չմշակված են լինում: Պայքարի եղանակներն են՝ ճիշտ ցանքաշրջանառությունը, ժամանակին և ախտահանված, առողջ սերմերով ցանքը: Կտավատին վնաս են պատճառում կտավատի լվիկը, կտավատի պտղակերը, առվույտի սովկան կտավատի տերևառլորը:

Բերքահավաքը կատարվում է կոմբայններով, լրիվ



հասունացման շրջանում, երբ բույսերի ցողունները և տուփիկները գորշացել են, իսկ տերևներն ամբողջովին թափվել են:

Կտավատի ձեթի մշակման եղանակները

Կտավատի սերմ վերաբերում է արագ չորացող յուղերի շարքին, քանի որ մթնոլորտում թթվածնի առկայության դեպքում հեշտ պոլիմերացվում է («չորանում»): Այս հատկությունը պայմանավորված է չհագեցված ճարպաթթուների բարձր պարունակությամբ.

15% -30% - լինոլիկ թթու;

44% -61% linolenic թթու;

13% -29% oleic թթու;

Հագեցած թթուների պարունակությունը տատանվում է 9% -ից մինչև 11%: Կինեմատիկական մածուցիկության 20°C 1,5,5 • 10-6 մ² / վրկ, յոդի արժեքը 175-204:

Կտավատի ձեթը ունի կարևոր տեխնիկական նշանակություն: դրանից պատրաստվում է արագ չորացող լաքեր, օլիֆ, կտավի ներկերի համար հեղուկներ: Այն լայնորեն օգտագործվում է գեղանկարչության մեջ օգտագործվող բնական լինոլիումի և յուղաներկերի արտադրության համար: Կտավատի ձեթը օգտագործվում է կերակրի մեջ (սրա մեջ չհագեցված ճարպային թթուների քանակությունը 2 անգամ ավելի մեծ է, քան ձկան յուղում) և օգտագործվում է բժշկության մեջ՝ ներքին օգտագործման համար (դրա օգտագործումը նվազեցնում է ինսուլտի ռիսկը 37%), ինչպես նաև քսուկների տեսքով և շփումների համար: Ժողովրդական բժշկության մեջ այն օգտագործվում է որպես ճիճուների,



սրտանոթային հիվանդության, խոցերի և այլ հիվանդությունների բուժման համար:

Կախված մշակման տեսակից, կտավատի բուսական ձեթը կարող է լինել հետևյալ տեսակների՝

- չզտված կտավատի ձեթ՝ ստացվում է պահպանման ֆիլտրացման կամ ցենտրիֆուգացման միջոցով՝ ազատվելով մեխանիկական խառնուրդներից: Այս ձեթը պահպանում է բոլոր հատկությունները (գույնը, համը, հոտը), երկարատև պահպանելու դեպքում այն փչանում և նստվածք է տալիս (ֆոս),

- խոնավացված կտավատի ձեթ՝ մշակվում է ջրի միջոցով, ֆոսֆատիդների հեռացման համար, որոնք ձեթի մեջ մնացորդներ են թողնում: Այս ձեթը պահպանում է չզտվածի հատկությունները և նստվածք չի տալիս:

- զտված կտավատի յուղը ենթարկվում է մեխանիկական և քիմիական մշակման (մաքրում) ալկալով, որը չեզոքացնում է ազատ ճարպաթթուները: Այս ձեթը չունի նստվածք, պիտանի է երկար պահպանման դեպքում: գույնը, համը և հոտը՝ թույլ է;

- զտված մաքրված դեզոդորացված կտավատի ձեթը բացի վերամշակումից ենթարկվում է նաև մաքրման և դեզոդորիզացում: Մաքրումը հանգեցնում է ձեթի գունաթափմանը՝ սպիտակեցված ավազով (կավի) մշակման միջոցով, այնուհետև՝ ակտիվացված փայտածուխի միջոցով ֆիլտրացվում է:

Զտված կտավատի ձեթը ստանում են երկու եղանակով՝ սեղմելով և արդյունահանելով; Զգտված կտավատի ձեթը ստանում են միայն մի եղանակով՝ սեղմելով (press):

Զտված կտավատի ձեթը պետք է լինի մաքուր, հստակ, առանց նստվածքի, ունենա կանաչավուն դեղին գույն, մի փոքր արտահայտված համ և հոտ: Զգտված ձեթը բաժանված է երկու դասի՝ 1-ին և 2-րդ: Համը և հոտը մաքուր են, առանց դառնության, թույլատրելի նստվածքը (ըստ քաշի)՝ 1-ին տեսակում ոչ ավելի, քան 0,05%, երկրորդում՝ 0,1%: Երկու տեսակներում էլ խոնավության պարունակությունը և ցնդող նյութերը կազմում են ոչ ավելի, քան 0.3%:



Կտավատի ձեթի ստացման եղանակները

1. Սառը սեղմում:

Այս տեխնիկան թույլ է տալիս դուրս ստանալ ձեթը հումքի առավելագույն տնտեսման



ռեժիմով, առանց նախնական 120 ° C տաքացման և քիմիական լուծիչներով մշակման անհրաժեշտության: Մանրացված և մաքրված հումքը տեղադրվում է պրեսի տակ: Սառը պրեսի դեպքում տեղային տաքացում կուն թավի մեջ հումքի նախնական տաքացում տեղի չի ունենում, արդյունքում ստանում ենք բարձր որակի ձեթ: Այս դեպքում ստանում ենք մոտ 30% ձեթ ընդհանուր զանգվածից: Սառը

սեղմման դեպքում հումքը առավելագույնս պահպանում է իր օգտակար բաղադրիչների քանակը: սառը եղանակով ստացված ձեթի արտաքին նշաններից կարող է լինել ամպամած նստվածքի առկայությունը (հատկապես ցածր ջերմաստիճանի դեպքում): Այն չպետք է օգտագործվի տապակի համար, այն փրփրում և այրվում է: Այս ձեթը երկար ժամանակ չի պահվում և թանկ արժե:

2. Տաք սեղմում:

Այս մեթոդով հումքը լցնում են գտիչ մեքենայի մեջ՝ նախատեսված միաժամանակ տաքացման 120°C և մանրացման համար, և շարունակակաբար զանգվածը սեղմելով այն բաժնում է բուսական ձեթը և քուսպը : Նման ձեթում օգտակար նյութերը և



վիտամինները ավելի քիչ են:

3. Արդյունահանումը



Ձեթի ստացման այս տարբերակը երկաստճան գործընթաց է: Նախ մանրացված հումքից հատուկ լուծիչների օգնությամբ ստանում են ձեթը: Այնուհետև լուծիչները հեռացվում են դրանից, թորման միջոցով: Այս մեթոդով ստացված ձեթը մասնակի է կորցնում իր օգտակար բաղադրիչները՝ օրնակ վիտամին E, բուսական sterol-ները և այլն: ազատ ճարպաթթուների մակարդակը այս եղանակով ստացված ձեթի մեջ բարձր է, ինչը վատացնում է դրա համը, անսովորն յուրօրինակ հոտ է տալիս և նվազեցնում պահպանման ժամկետը: Այս ամենից հետո ձեթը անցնում է մաքրման համակարգով: հետո, կտավատի յուղը անցնում է մաքրման համակարգով:

Ձեթը բաժանվում է հոտեղյալ մաքրման եղանակների.

- ❖ Հում ձեթը արտադրվում է մարդու նվազագույն մասնակցությամբ: Այսպիսի ձեթը բացառապես զտման է ենթարկվում՝ կեղտից ազատվելու համար: Կենսաբանական բոլոր արժեքավոր բաղադրիչները ամբողջությամբ պահպանվում են: Այս ձեթը բնորոշվում և առանձնանում է նաև բարձր համային հատկանիշներով:
- ❖ Չզտված ձեթը ենթարկվում է մասնակի մեխանիկական մաքրման՝ նստվածքային, ֆիլտրում, ցենտրիֆուգացում, խոնավեցում (մշակում տաք ջրով) և չեզոքացում: Խոնավեցման գործընթացի ժամանակ օգտակար բաղադրիչներ մի մասը հեռացվում է, մնացած մասը ձեթին տալիս է



պղտորություն կամ նստվածք, - դրանից պետք չէ վախենալ, այլ ընդհակառակը:

- ❖ Զտված ձեթը ենթարկվում է համալիր վերամշակման: կարգավորման, ֆիլտրման և ցենտրիֆուգացում, խոնավեցում, վնասազերծման կամ ալկալային մաքրման, իդեական գտում՝ ձեթը մշակվում է adsorbents նյութերով, որը կլանում է ներկանյութերը և նրա գույնը ավելի բաց ու մաքուր է դառնում: Զտվող ձեթը կարող է անցնել ևս մեկ մաքրման աստիճան՝ դեզոդորացում և/կամ սառեցում: Դեզոդորացված ձեթ դա վակուումի մեջ տաք չոր գոլորշով մշակման եղանակն է: Ձեթը թափանցիկ է, առանց նստվածքի, առանց ընդգծված համի և հոտի:

Կտավատի սերմերի օգտակար հատկությունները

Ինչպես պարզվել է վերջին գիտական հետազոտությունների ընթացքում, կտավատի սերմերը կիսաչհագեցած ճարպաթթուների, բջջանյութերի և լիզնանի արժեքավոր

հանդիսանում: Այն

կալիումով,

E-ով,

ամինաթթուներով

հանքանյութերով:

Կտավատի

պարունակվող

ճարպաթթուները,

օմեգա-3 և ալֆա-

մեր բջիջները



աղբյուր են

հարուստ է

վիտամին A, B,

անփոխարինելի

և

սեմերի մեջ

կիսաչհագեցած

այդ թվում նաև՝

լինոլաթթուն,

պաշտպանում

են քաղցկեղային հիվանդություններից, ճնշում արդեն առկա ուռուցքների աճը, և նպաստում մարդու իմունային համակարգի աշխատանքի լավացմանը:

Սերմերում պարունակվող բջջանյութերը նվազեցնում են քաղցկեղով հիվանդանալու ռիսկը, իր մեջ ներծծելով աղիների վնասակար նյութերը և ուժեղացնելով գալարակծկանքը: Բացի այդ, բջջանյութը պաշտպանում է արթնոսկլերոզից և նպաստում քաշի նվազեցմանը:



Կտավատի սերմերի մեջ պարունակվող մեծ խտությամբ լիզնանն օժտված է ուժեղ հակաօքսիդանտային, հակաքաղցկեղային և հակաալերգենային հատկություններով: Լիզնաններն օրգանիզմը պաշտպանում են կրծքագեղձի և շագանակագեղձի քաղցկեղից:

Կտավատի սերմերի բուժական հատկությունները

Սննդի մեջ պարբերաբար օգտագործելով, կտավատի սերմերը լավացնում են երիկամների, լյարդի, վահանագեղձի և ստամոքս-աղիքային ուղու աշխատանքը, պաշտպանում տրոմբոզից, նվազեցնում սիրտ-անոթային և քաղցկեղային



հիվանդությունների զարգացման ռիսկը: Բացի վերը թվարկվածից, սերմերն օժտված են նաև երիտասարդացնող և հակամանրէային հատկությամբ, այն թուրմի ձևով օգտագործվում է որպես խորխաբեր, լուծողական և հակաբորբոքային միջոց:

Կտավատի սերմերն սննդի մեջ որպես հավելում է օգտագործվում, այն շատ է օգնում նիհարել ցանկացողներին: Մանրացրած սերմերը հարկ է օգտագործել օրական 1 ճաշի գդալ, ավելացնելով սննդին, օրինակ՝ շիլաներին, աղցաններին և շոգեխաշած բանջարեղենին: Դրա օգուտը կրկնակի է. օրգանիզմը ստանում է շատ արժեքավոր հանքանյութեր և վիտամիններ, դրա հետ մեկտեղ աստիճանաբար քաշն է նվազում:



Ինչպես օգտագործել կտավատի սերմերը

Դրանք կարելի է օգտագործել ինչպես ամբողջական, այնպես էլ մանրացրած ձևով: Ավելի լավ է սերմերը թրջել երեկոյան, իսկ հետո դրանք ամբողջ օրվա ընթացքում օգտագործել սննդի մեջ: Կտավատի սերմերը կարելի է լցնել առօրյա կերակուրների՝ հատկապես հացաբուլկեղենի, յոգուրտի, մածունի և շիլաների մեջ. օրական պետք է



օգտագործել 5գ.: Ի դեպ, վերջերս Կանադայում մի նախագիծ է մշակվել, համաձայն որի՝ հացաբուլկեղենի մեջ պետք է կտավատի սերմեր օգտագործել (մինչև 12%):

Կտավատի սերմերից ստացվող յուղի օգտակար հատկությունները

Դեռ հին ժամանակներից կտավատի սերմերից ստացված յուղն օգտագործվում էր

որպես դեղորայքային ու ընդհանուր դիմադրողականությունն ամրապնդող միջոց: Օգտագործվում էր ինչպես արտաքին (մազերի ու մաշկի համար), այնպես էլ պերորալ կերպով: Նշված ապրանքի արժեքավորությունը կայանում է նրանում առկա օմեգա ճարպաթթուների բարձր պարունակության մեջ (օլեինաթթու, լինոլաթթու, լինոլենաթթու). կտավատի յուղը նշված ցուցանիշներով առաջ է



անցնում անգամ ձկան յուղից:

Արտաքին օգտագործման դեպքում այդ թթուները վերականգնում են մաշկի ու մազերի մակերեսը՝ սնուցելով ու կազդուրելով նրանց: Կտավատի յուղն օգնում է կարգավորել օրգանիզմի նյութափոխանակությունը, ազատվել ավելորդ քաշից ու օրգանիզմից դուրս բերել խոլեստերինը, ինչպես նաև ամրապնդել անոթներն ու նվազեցնել ինֆարկտի ու կաթվածի (ինսուլտի) առաջացման հավանականությունը: Այն նաև օգնում է բարձրացնել իմունիտետն ու նվազեցնել ալերգիկ ռիակցիանների առաջացման հավանականությունը:

Ավելին, օմեգա-թթուները բարելավում են սննդի մեջ առկա կալցիումի ընկալման գործընթացը, որն էլ և ուժեղացնում է ոսկորները, մկաններն ու ջիլերը, ինչպես նաև արդյունավետ է ազդում տեսողության վրա:

Ձեռքերումն ու պահպանումը

Այսօր վաճառքում հնարավոր է գտնել տարբեր տեսակի կտավատի յուղեր: Մազերի կամ կոսմետիկ յուղերի խառնուրդները նախատեսված են միայն արտաքին օգտագործման համար:

Ներքին օգտագործման համար ցանկալի է օգտագործել սառը սեղմման պրոցեսով ստացված յուղը: Վերջինիս պահպանման ժամկետն այդքան էլ երկար չէ, այդ պատճառով էլ ցանկալի է այն գնել փոքր չափաքանակով ու ուշադրություն դարձնել «պատրաստման» ամսաթվին: Իդեալական տարրան համարվում է շատ մուգ ապակուց պատրաստված շիշը, քանի որ նման փաթեթավորման մեջ էլ յուղն ավելի շատ է պահպանում իր

օգտակար

հատկությունները,

որը այն կարող է

կորցնել արևի

ճառագայթների

ազդեցության

արդյունքում:

Ցանկալի է այն պահել

սառնարանում, այն



անհրաժեշտ չէ տաքացնել կամ ենթարկել ջերմային մշակման:

Կտավատի յուղն ունի յուրօրինակ դառը, մի փոքր ձկան յուղ հիշեցնող համ:

Եթե այն բերանում՝ մինչև կուլ տալը, սկսում է դառնանալ, ապա դա նշանակում է, որ այն արդեն պիտանի չէ ներքին օգտագործման համար:

Օգտագործման կանոնները

Սովորաբար այդ միջոցի ընդունման համակարգը բավականին պարզ է: Սակայն քրոնիկ հիվանդությունների առկայության դեպքում հարկավոր է խորհրդակցել բժիշկի հետ և իմանալ թե ինչպես կարելի է ճիշտ օգտագործել կտավատի յուղը:

Եթե հակացուցումներ չկան, ապա այն կարող եք հանգիստ օգտագործել: Սակայն հարկավոր չէ ակնկալել շատ արագ արդյունքներ: Բավական է միայն, որպեսզի դուք



ձեզ
համար
ստեղծե-
ք նոր
շատ
արդյուն-
ավետ
ու
օգտակ-
ար

սովորություն ու այն 1-ից 2 ամիս ճշգրիտ կիրառել, իսկ այդ ժամանակը բավարար է, որպեսզի նկատելի լինեն առաջին արդյունքները:

Կտավատի յուղը սկսում են օգտագործել 1-ական թեյի գդալից՝ առավոտյան ուտելուց առաջ ու երեկոյան քնելուց առաջ: Աստիճանաբար, վարժվելով վերջինիս համին, կարելի է բարձրացնել չափաբաժինը՝ հասցնելով այն մինչև 1 ճաշի գդալի: Եթե մթերքի համը ձեզ մոտ տհաճություն է առաջացնում, ապա այն կարող եք խառնել փոքր քանակությամբ կաթնաշոռի կամ կեֆիրի հետ, ուտել խնձոր կամ խմել մրգային հյութի հետ, կամ ավելացնել մեղրի, մրգային օշարակի մեջ: Այն շատ օգտակար է կիրառել բանջարեղենային աղցանների մեջ, որի ընթացքում յուրօրինակ հոտը կանցնի, սակայն օգտակար հատկությունները կմնան:



Հակացուցված է



Չնայած իր
օգտակարությանը,
գոյություն ունեն մի շարք
հիվանդություններ ու
«օրգանիզմի վիճակներ»,
որոնց դեպքում այն
հարկավոր է շատ զգույշ
օգտագործել, իսկ երբեմն

անհրաժեշտ է առհասարակ հրաժարվել վերջինիս օգտագործումից:

Նման ախտորոշումների դեպքում հարկավոր է անպայման խորհրդակցել բժիշկի
հետ:


- Լյարդի ցանկացած հիվանդությունների (հատկապես հեպատիտի) ու լեղուղիների
հիվանդությունների դեպքում,
- Պոլիպների կամ արգանդի ու կցորդների՝ մակամորձու կիստայի, գինեկոլոգիական
արյունահոսության առաջացման դեպքում,
- Խոլեցիստիտի, (այդ հիվանդության դեպքում կտավատի յուղը կարելի է ընդունել
միայն սննդի օգտագործման ժամանակ, մի շարք այլ մթերքների հետ միասին),
- Հակադեպրեսսանտների ու հորմոնալ դեղամիջոցների, հատկապես
հակաբեղմնավորիչների ընդունման ժամանակ,
- Հղիության ու կրծքով կերակրելու ժամանակ,
- Հակաալկահոլային դեղամիջոցների ընդունման ժամանակ(կտավատի յուղը կարող
է դանդաղեցնել արյան մակարդումը, որը դեղամիջոցների ազդեցության հետ միասին
կարող է հանգեցնել արյունահոսության առաջացման):

Կտավատի մշակումը Գեղարքունիքի մարզում և արտահանում

Ինչպես տեսանք Հայաստանում կտավատի մշակումը երկար պատմություն ունի և դրա
վայրի տեսակները աճում են գրեթե բոլոր մարզերում: Առանձնահատուկ, ուշադրության է
արժանի Գեղարքունիքի մարզը, որտեղ կան բոլոր բնակլիմայական պայմանները կտավատի
արտադրությամբ զբաղվելու համար: Չնայած, որ մարզում կտավատով զբաղվողներ կան,
սակայն դեռ այդքան ինտենսիվ չէ, քանի որ կան մի շարք խնդիրներ, որոնց բախվում են



ուշադրությանն է
ներկայացրել բիզնես-
ծրագիր, որով
նախատեսում է
գյուղում կազմակերպել
կտավատի ձեթի ավելի
խոշոր արտադրություն:
Ինչպես այլ ֆերմերներ
Ահարոն Բադալյանը



բայց արդյունքը եղել է զրոյական, քանի որ կարկուտն ամբողջովին ավերեց ցանքը: Այս գարնանը ցանքը կատարել է տարբեր գոտիների հողերում, որպեսզի կարկուտի դեպքում որոշ հողամասեր գերծ մնան վնասից: Բարեբախտաբար, 5 հեկտարն էլ գրեթե անվնաս է մնացել: Միայն բարձրադիր գոտում բերքը չի հասցրել լրիվ հասնել: Եվ չնայած լավ բերքին ֆերմերը ունի իրացման խնդիր: Կտավատի արտադրությամբ զբաղվող գյուղացու համար դժվար է հասկանալ, թե ինչպես է, որ կտավատի ձեթի մեկ լիտրը վաճառվում է մինչև 4-6 հազար դրամով, սակայն կտավատի 1 կիլոգրամը շուկայում վաճառվում կամ ձիթհաններում մթերվում է 600 դրամով, այն դեպքում, երբ մշակաբույսի 3 կիլոգրամից ստացվում է 1 լիտր ձեթ: Երկու տարի առաջ կտավատի մեկ կիլոգրամը վաճառվում էր մինչև 2 հազար դրամով: Անցած տարի այն տատանվում էր 1000-1500 դրամի սահմաններում, իսկ այս տարի արդեն խոսք է գնում 600-800 դրամի մասին, ինչն արդեն արտադրողի համար շահավետ չի կարող լինել: Դրսից ձիթհան կազմակերպությունները ներկրում են կտավատը մոտ 600 դրամով, բայց մեր լեռնաշխարհում աճեցված կտավատի որակը բարձր է:

2017 թվականի տվյալներով Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքն այսօր հանդիսանում է կտավատի արտադրության կենտրոնը: Համայնքում մշակվում է ավելի քան 35-40 հա կտավատի հողատարածք, և քրթնաջան աշխատանքի ընթացքում ստացվում է շուրջ 40տ կտավատ: Համայնքում միջին բերքատվությունը հեկտարից կազմում է 1տ: Այսօր Լճափ համայնքում կտավատի մշակությամբ զբաղվում են 15 ֆերմերներ, որոնցից 7-ն ապահովում են բերքի գրեթե 65-70%-ը:

Ֆերմերները կտավատի արտադրության կազմակերպման ու ընդլայնման համար առանձնացնում են երկու հանգամանք, որպեսզի բերքահավաքը կատարվի հնարավորինս անկորուստ. վաղ գարնանային ցանքը և ժամանակակից կոմբայնի առկայությունը շատ կարևոր են: Գեղարքունիքի մարզում կտավատի մշակման տարիների փորձը ցույց տվել, որ կտավատի սերմը հարկավոր է հողին պահ տալ մինչև մայիսի առաջին տասնօրյակը, որպեսզի բույսը հասցնի կատարել իր հասունացումը: Իսկ նման ծավալների անկորուստ բերքահավաք կատարելու համար



հարկավոր է ժամանակակից կոմբայն, իսկ այսօր նրանց ունեցած հնացած տեխնիկայով անհնար է նորմալ բերքահավաք կատարել::

Ինչ վերաբերվում է արտահանմանը, երբ խոսք է գնում հայկական այս կամ այն արտադրանքը արտահանելու մասին, կառավարության պատասխանատուները հաճախ շեշտում են, որ գործարարները որակյալ ու դրսի շուկայի համար մրցունակ ապրանք չեն արտադրում: 15 տարուց ավելի է Սիրակ Բաղալյանը Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղում կտավատի ձեթի արտադրություն ունի: Գործարարը գիտի, ինչպես ավելի որակյալ ու մրցունակ արտադրանք թողարկի, ինչ չափանիշներով աշխատի, որպեսզի թե՛ եվրոպական և թե՛ մնացած շուկաներում արտադրանքը պահանջարկ ունենա, սակայն չգիտի, թե որտեղի՞ց մի քանի միլիոն գումար գտնի, որպեսզի իր արտադրամասի սարքավորումները նորացնի, ժամանակի պահանջներին համապատասխանեցնի: Նա կտավատի ձեթի իր նմուշն անգամ Գերմանիա է ուղարկել, որտեղից պատասխանել են, որ ցանկանում են հայ արտադրողի հետ համագործակցել, բայց գործարարն ուզում է ավելի որակյալ ապրանք արտահանել, ինչի համար ժամանակակից տեխնոլոգիաներ են անհրաժեշտ: Նրա խոսքերով, եթե հին սարքավորումներով 3,5-4 կիլոգրամից է դուրս գալիս մեկ լիտր ձեթ, նորագույն տեխնիկայով 2,5-ից 3 կիլոգրամ կտավատից մեկ լիտր ձեթ կարելի է ստանալ: Ըստ նրա, «ժողովրդին մաքուր ու որակյալ ապրանք մատակարարելու համար» ստերիլիզատորը նույնպես կարևոր է: Եթե գործերը լավանան, Սիրակ Բաղալյանը ամեն տարվա 5-10 հեկտարի փոխարեն 20 հեկտարից ավելի կտավատի ցանքատարածություն կմշակի: Համագյուղացիների հետ էլ պայմանագիր կկնքի ու նրանցից էլ կտավատ կմթերի, ինչը կնշանակի գյուղացիների պարապուրդի մատնված հողերն էլ կմշակվեն: Գեղարքունիքի կտավատի առավելությունն այն է, որ ցանքատարածությունները գրեթե 2000 մետր բարձրության վրա են, համարյա թե Ալպիական է դառնում, և քանի որ պարարտանյութ էլ չեն օգտագործում, ձեթը շատ ավելի օգտակար և մաքուր է դառնում:

Հավելում

2017 թվականի սեպտեմբերի 15-ին կայացավ Կտավատի համոտես-ցուցահանդեսը: Միջոցառումը իրականացվում էր EcoVoosh-Կտավատ արտադրողների խումբը կողմից



Միջոցառմանը աջակցում էին World Vision Armenia - Վորլդ Վիժն Հայաստան միջազգային բարեգործական կազմակերպությանը: Ինչպես նաև Baguette & Co. Armenia, «Թության» ՍՊԸ, Հանուն Առողջ Սերնդի Шедер), Menu.am-ը նկերությունները, որոնք իրենց մասնակցությունն ու ներդրումն են ունեցել այս միջոցառումն ավելի հետաքրքիր և համեղ դարձնելու գործում:

Համտես - ցուցահանդեսի նպատակն էր ներկայացնել ԷկոՎուշ կտավատ արտադրողների խմբի արտադրանքը, դուրս բերել լայն շուկա և նպաստել Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքի տնտեսական զարգացմանը: Խմբին նաև հնարավորություն ընձեռվեց կապ հաստատել կտավատի իրացմամբ հետաքրքրված տարբեր կազմակերպությունների հետ և հիմք դրվեց նոր արժեշրթայի ստեղծմանը:





Այս հրատարակությունը (խմբագրությունը)
 ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոէկոսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցով կենսապայմանները բարելավում>> ծրագրի արդյունքների
 միմաստը: Գլոբալ էկոլոգիական շինարարության (ԳԷՀ)
 կողմից աջակցվող սույն ծրագրի ընդհանուր գլուխը Բիոլոգիական ինքնակառավարման (IPGRI)
 կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

